ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Հեռ./ Ֆաքս `53-09-86

Երևան-19, Պռոշյան փ.1 փակուղի 20

«26» 03 2015թ

№ 19/317

Հարգելի գործընկեր

<<ՀՀ ԳԱԿ-ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-11/10-010>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ պետական պահպանության ծառայության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել <<ՀՀ ԳԱԿ-ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-11/10>> շրջանակային համաձայնագրով նախատեսված համազգեստ: Ապրանքների մատակարարման պայմանները ներկայացված են պայմանագրի նախագծում:Հայտնում ենք, որ հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով:Հայտը ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող օրվանից հաշված յոթ աշխատանքային օրվա ընթացքում: Հայտերի բացման օր է սահմանվում հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ժամը 09:00: (հարցերի դեպքում զանգահարել՝ Ա. Կիրակոսյանին 077 26 30 63 ,010 56 29 44):

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել << ՀՀ ԳԱԿ-ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-11/10-010>> ընթացակարգի հրավերով սահմանված կարգին համապատասխան:Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Հ. Հարությունյան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ

N _____

ք. Երևան « « _____ 2014թ.

Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության պետ Հ. Հարությունյանի, որը գործում է «Հատուկ պետական պաշպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի և Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և _____ն, ի դեմս Ընկերության տնօրեն _____-ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավոր է սույն պայմանագրով սահմանված կարգով, նահատեսված ծավալներով ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված համազգեստ (այսուհետև ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2.Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացուցային համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի N 1 նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը .

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կֆքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1. Միակողմանի լուծել սույն Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անշարժ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Ձննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.4 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսված ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը իրականացվնել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգով հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակի հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված մջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող Ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ծառայության հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն `

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմի ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանցվում է տույժ 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանցվում է տուգանք պայմանագրի ընդհանուր գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5. Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ ուշացված յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցություն /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործոդուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական մջջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն է հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանջորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 . Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և) (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դորս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորթոյւների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու
Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայություն
ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900011303014
ՀՎՀՀ 00006796

Պետ **Հ. Հարությունյան**

Հավելված 1
«_ _» _____ 2015թ. կնքված
N_____ շրջանակային համաձայնագրի

Տեխնիկական բնութագիր

Հ/Հ	ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Չափի միավորը	**Տեխնիկական հատկանիշը և այլ պահանջներ**
1	կիսավերարկու	հատ	Պահանջվում է անհակատան կար Պատվիրատուի կողմից նշված վայրում,տեղափոխումը նշված վայրեր իրականացվում է Վաճառողի միջոցներով: ունի երկկարանի ներկարված թևքեր, ծալովի օձիք և դարձածալ, օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Հետևամասին և առաջամասին մշակված են վրակարված կոկետկաներ: Առաջամասում մշակված են շերտիկով կողքի գրպաններ: Հետնամասն ունի միջնակար: Բաճկոնի օձիքը կտրված կանգունակով է: Բաճկոնի առաջամասերի և հետևամասերի աստառները փախլավաձև մգդակարված են տաքացնող ներդիրով (վատինե): Թևքերի աստառներին ներդրվում է սինտեպոն: Ձախ առաջամասի աստառին մշակված է շերտիկով ծոցագրպան, որը կոճկվում է օդային օղակով և կոճակով: Բաճկոնը կապվում է 4-4,5սմ լայնության գոտիով, որը անցկացվում է կողքերի կարերում մշակված կամրջակների միջով: Գոտին կոճկվում է պլաստմասե ճարմանդով և գոտու վրա մշակված կամրջակով: Բաճկոնը կոճկվում 4 կոճակօղակներով՝ գաղտնի կոճկվածքով: Լանջափեշի, օձիքի, գոտու, գրպանի, կոկետկաների եզրերը մշակված են, 0.1-0.7 սմ լայնությամբ զուգահեռ զարդակարերով: Գաղտնի կոճկվածքը մշակվում է 6 սմ լայնությամբ լայն զարդակարերով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Բաճկոնի երեսացուն դեղնականաչավուն, «Գրետա» տեսակի կտորից, 50% բամբակ և 50% պոլիէսթեր բաղադրության: Աստառը ԳOUS-2272-96 8-C5-ВШ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գույնի կտորից: Բաճկոնի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը, ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Արտադրվում են 46/2 մինչև 64/6 չափս-հասակի: Բաճկոնի ներքևից երրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը, ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ - եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն բաճկոնի չափսերին: Արկղերը պիտակավորված՝ պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը:
2	թիկնոց-ուսնոց	հատ	Անջրթափանց դեղնականաչավուն կտոր, երկու կողային բացվածքով ձեռքերի համար և գլխանոցով:
3	վերնաշապիկ երկարաթև սպիտակ	հատ	Պահանջվում է անհակատան կար Պատվիրատուի կողմից նշված վայրում,տեղափոխումը նշված վայրեր իրականացվում է Վաճառողի միջոցներով: Վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Մեջքը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի, թևերը ներկարված բազկակալներով և կոճկվող բացվածքներով: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում կամրջակներ և երեք փակօղակներ: Կոճակները՝ պլաստմասայից, կտորի գույնի: Գրպանների կափույրների և բազկակալների կոճակները 14 մմ, մնացածը 11մմ երկու անցքով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ -ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը

4	վերնաշապիկ կարճաթև սպիտակ	հատ	Պահանջվում է անհակատան կար Պատվիրատույի կողմից նշված վայրում,տեղափոխումը նշված վայրեր իրականացվում է Վաճառողի միջոցներով: Վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և կարճ թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Ձախ լանջափեշին ուղղահայաց շերտակարով: Մեջքը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի, թևերը ներկարված կարճ և շերտակարերով: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում կամրջակներ և երեք փակօղակներ: Կոճակները՝ պլաստմասայից, կտորի գույնի: Գրպանների կափույրների կոճակները 14 մմ, մնացածը 11մմ երկու անցքով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ -ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը:
5	վերնաշապիկ երկարաթև դեղնականաչավուն	հատ	Պահանջվում է անհակատան կար Պատվիրատույի կողմից նշված վայրում,տեղափոխումը նշված վայրեր իրականացվում է Վաճառողի միջոցներով: Վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Մեջքը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի, թևերը ներկարված բազկակալներով և կոճկվող բացվածքներով: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում կամրջակներ և երեք փակօղակներ: Կոճակները՝ պլաստմասայից, կտորի գույնի: Գրպանների կափույրների և բազկակալների կոճակները 14 մմ, մնացածը 11մմ երկու անցքով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ -ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը,
6	վերնաշապիկ կարճաթև դեղնականաչավուն	հատ	Պահանջվում է անհակատան կար Պատվիրատույի կողմից նշված վայրում,տեղափոխումը նշված վայրեր իրականացվում է Վաճառողի միջոցներով: Վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և կարճ թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Ձախ լանջափեշին ուղղահայաց շերտակարով: Մեջքը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի, թևերը ներկարված կարճ և շերտակարերով: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում կամրջակներ և երեք փակօղակներ: Կոճակները՝ պլաստմասայից, կտորի գույնի: Գրպանների կափույրների կոճակները 14 մմ, մնացածը 11մմ երկու անցքով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ -ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը,

7	փողկապ սև գույնի	հատ	Սև գույնի կիսաբրդյա կտոր, օձիքի մասը ռետինե ժապավենով և ամրակով
8	փողկապ դեղնականաչավուն գույնի	հատ	Դեղնականաչավուն գույնի կիսաբրդյա կտոր, օձիքի մասը ռետինե ժապավենով և ամրակով:
9	գոտկատեղի-կաշեգոտի	հատ	արտադրվում է բնական կաշվից, 50 մմ լայնությամբ, լինում է 3 երկարության I չափսը - 1050 մմ, II - 1150 մմ, III - 1250 մմ: Ներսի կողմից մշակվում է բնական գույնի փափուկ կաշվով ձևավոր զարդակարով: Զարդակարի թելերը շականակագույն բնական մետաքսից: Գոտուն կարվում է հնգապատ երկսեպիկանի արույրե ճարմանդ, իսկ ազատ ծայրին լինում է անցք, ճարմանդի համար, պետք է ունենա մեկ գոտեմակող: Կաշեգոտու վրա պետք է դրոշմված լինի չափսը, արտադրող կազմակերպության անունը, արտադրման տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը - ստվարաթղթե տուփերով, մեկ տուփի մեջ 5 հատ, տուփերը պիտակավորված, պիտակի վրա նշելով արտադրանքի անվանումը, արտադրող կազմակերպության անունը , չափսը, մատակարար կազմակերպության անունը, արտադրման տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը:
10	գլխարկ ամենօրյա կիսաբրդյա	հատ	Պահանջվում է անհատական կար Պատվիրատուի կողմից նշված վայրում,տեղափոխումը նշված վայրեր իրականացվում է Վաճառողի միջոցներով: -Դեղնականաչավուն կտորից, կապույտ կանտով բաղկացած է սև լաքապատ գլխարկահովհարից: Գլխարկաբոլորիքի վրա երկու փոքր մետաղյա ոսկեգույն կոճակով ամրացվում է ոսկեզօծ զարդապարան (գոտի): Գլխարկաբոլորքի վերևի և գագաթի միացման տեղով անցնում է 2 մմ լայնքով կապույտ մահուդից կանտ: Հայաստանի Հանրապետության Պետական Պահպանության Ծառայության ավագ, կրտսեր սպայական կազմի և ենթասպայական կազմի գլխաբոլորքի առջևի կենտրոնական մասում ամրացվում է ոսկեգույն գլխարկանշանը դափնեպսակի տեսքով և գլխարկակատարի վրա՝ Հայաստանի Հանրապետության զինանշանը:
11	գլխարկ ականջակալերով ոչխարի մորթուց	հատ	Պահանջվում է անհատական կար Պատվիրատուի կողմից նշված վայրում,տեղափոխումը նշված վայրեր իրականացվում է Վաճառողի միջոցներով: -Գլխարկը բաղկացած է գլխարկաբոլորքից, ականջակալներից և ճակատային մասից (հովհար): Գլխարկաբոլորքը, ականջակալները և ճակատային մասը՝ ոչխարի մոխրագույն մորթուց, Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի,չոգտագործված, անհատական կար: Փաթեթավորումը՝ցելոֆոնե տոպրակներով, յուրաքանչյուրի համար նախատեսված արանձին, արկղերով, մեկ արկղի մեջ՝ 10 հատ: Արկղերը՝ պիտակավորված: Պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը:
12	համազգեստ 1 /կիտել ամենօրյա և ազատթող փողկերով տաբատ/	լրակազմ	Պահանջվում է անհատական կար Պատվիրատուի կողմից նշված վայրում,տեղափոխումը նշված վայրեր իրականացվում է Վաճառողի միջոցներով: Կիսաբրդյա կոստյումը բաղկացած է կիտելից և ազատթող տաբատից <u>Կիտելը</u> բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը կոճկվում են չորս, ՀՀ ԱԱԾ զինաշանի դաջվածքով 22 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են մեկական ՀՀ ԱԱԾ զինաշանի դաջվածքով 14 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով իսկ կողքերից կտրվածքով, կափույրով գրպաններ: Մեջքի ներքևում, կենտրոնից բացվածքով: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակված է կախիչ, թևերը ներկարված: Աստառը՝ 3331 ՌԿ արտիկուլի դեղնականաչավուն գույնի մետաքսից: Ձախ լանջափեշին մշակվում է կտրվածքով ծողագրպան: Կոստյումը՝ 2311 արտիկուլի կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից, 317 գրամ, 1մ^2 մակերեսային խտությամբ և 67% բրդի 33% պոլիէսթեր բաղադրության: Աստառացուն 3331 ՌԿ արտիկուլի դեղնականաչավուն գույնի: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Կիտելի ներքևից երրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը, ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ -ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: <u>Ազատթող տաբատը</u> կազմված է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը կողային գրպաններով: Աջ հետևամասում կտրված գրպան կափույրով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում անցկացվում է 1.5-2 մմ լայնության 2481/2581 ԲԱ արտիկուլի կապույտ գույնի մահուդից երիզներ: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է մետաքսյա աստառացու:

13	համազգեստ 2 /բաճկոն և ազատթող փողկերով տաբատ/	լրակազմ	Պահանջվում է անհակատան կար Պատվիրատուի կողմից նշված վայրում,տեղափոխումը նշված վայրեր իրականացվում է Վաճառողի միջոցներով: Կիսաբրդյա բաճկոնը կազմված է լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը միացվում են կետրոնական շղթայական, կոկետկայով, Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են երկու ՀՀ ԱԱԾ զինաշանի դաջվածքով, պաշտպանական գույնի 14 մմ, ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Կողային գրպանները շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով, կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Մեջքը կոկետկայով: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակված է կախիչ, թևքերը ներկարված, երկու կոճակով կոճկվող բազկակալներով: Ուսադիրների շրջանում երկու փակօղակներ և կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Ազատթող տաբատը կազմված է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը կողային գրպաններով: Աջ հետևամասում կտրված գրպան կափույրով: Ֆուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում անցկացվում է 1.5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կապույտ գույնի մահուդից երիզներ: Առաջամասիում, մինչև ծնկները մշակվում է մետաքսյա աստառացու: Երեսացուն՝ 2311 արտիկուլի կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից, 317 գրամ, 1մ^2 մակերեսային խտությամբ և 67% բրդի 33% պոլիէսթեր բաղադրության: Աստառացուն 3331 ՌԿ արտիկուլի դեղնականաչավուն գույնի: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 46/2 մինչև 62/6 չափս-հասակի: Փաթեթավորումը՝ -ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը:
14	համազգեստ 3 /կոստյում ձմեռային արհեստական մորթե օձիքով/	լրակազմ	Պահանջվում է անհակատան կար Պատվիրատուի կողմից նշված վայրում,տեղափոխումը նշված վայրեր իրականացվում է Վաճառողի միջոցներով: կոստյում ձմեռային արհեստական մորթե օձիգով համազգեստը բաղկացած է գունաքողարկված գործվածքից,տաք ներդիրով, բաչկոնն ունի 2 ներկարված կողային գրպան, մեկ ծոցագրպան : Առջևի մասում տեղադրված է շղթա: Օձիգը հանովի, արհետական մորթուց: Տաբատը կարված ուղիղ կարով, 2 կողային գրկաններով, առջևի մասում տեղադրված է շղթա
15	համազգեստ 4 /կոստյում ամառային գունաքողարկված կտորից/	լրակազմ	Պահանջվում է անհակատան կար Պատվիրատուի կողմից նշված վայրում,տեղափոխումը նշված վայրեր իրականացվում է Վաճառողի միջոցներով: Բամբակյա կտոր գունաքողարկված թելից: Բաճկոնի առջևամասը շղթայով, միջնադիրը բիազ, երկու վրադիր գրպան կափույրներով և երկու ներկարված կողային գրպաններ, ուսերի վրա տեղադրված են ուսադիրներ գունաքողարկված թելից: Տաբատը բամբակյա կտոր գունաքողարկված թելից, երկու ներկարված կողային գրպան, ետևամասում երկու գրպան կափույրով, առջևամասը շղթայով:
16	ուսադիր ամենօրյա ենթասպայական կազմի համար	զույգ	կապույտ մակաշերտերով և զոլերով, ըստ նշանակության
17	ուսադիր ամենօրյա հանովի և դնովի ենթասպայական կազմի համար	զույգ	կապույտ մակաշերտերով և զոլերով, ըստ նշանակության
18	ուսադիր տոնական ենթասպայական կազմի համար	զույգ	ոսկեգույն դաշտով և կապույտ մակաշերտերով և զոլերով, ըստ նշանակության
19	ուսադիր սպիտակ ենթասպայական կազմի համար	զույգ	սպիտակ դաշտով և կապույտ մակաշերտերով և զոլերով, ըստ նշանակության

20	ուսադիր տոնական սպայական կազմի համար	զույգ	ոսկեգույն դաշտով և կապույտ մակաշերտերով և զոլերով, ըստ նշանակության
21	ուսադիր տոնական բարձրաստիճան սպայական կազմի համար	զույգ	ոսկեգույն դաշտով և կապույտ մակաշերտերով և զոլերով, ըստ նշանակության
22	աստղ դեղին	հատ	դեղին գույնի 13մմ
23	աստղ խակի	հատ	խակի գույնի 13մմ
24	գլխարկանշան փոքր	հատ	գլխարկանշան /կակարդ/ ավագ.կրտսեր և ենթասպայական կազմի համար,դեղին գույնի մետաղից,պատրաստված ալյումինե համաձուլվածքից,օվալաձև է,2x3.5 սմ չափսի և կազմված է 32 երկնիստ ճառագայթից:գլխարկանշանի կենտրոնում տեղադրված է հարթնիստ հնգաձև աստղ,ետնամասում 2 մետաղյա արմակներով
25	կակարդ դաշտային	հատ	գլխարկանշան /կակարդ/ ավագ.կրտսեր և ենթասպայական կազմի համար,խակի գույնի մետաղից,պատրաստված ալյումինե համաձուլվածքից,օվալաձև է,2x3.5 սմ չափսի և կազմված է 32 երկնիստ ճառագայթից:գլխարկանշանի կենտրոնում տեղադրված է հարթնիստ հնգաձև աստղ,ետնամասում 2 մետաղյա արմակներով
26	բարձ	հատ	**ГОСТ** Р 50576-93, ՏՊ- 78502-80 -պատրաստի արտադրանքի չափսերը (58Х45) սմ, քաշը՝ 1.8 կգ, բարձը լցոնած բամբակով (լինտով), երեսացուն 100%-ոց բամբակ, գործվածքը (դիագանալ), 1 մ^2 քաշը 240գ.: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Բարձի անկյուններց մեկում պետք է կարված լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը:
27	սավան	հատ	բամբակյա սավան գործվածքը 100 % բամբակյա սպիտակ կտորից,պատրաստի արտադրանքի չափսերը (214x120)սմ, 1քմ ոչ պակաս 140 գրամ, արտադրանքի տեսքը համաձայն հաստատված նմուշի,փաթեթավորումը՝ պոլիեթիլենային թափանցիկ պարկերով,1 պարկի մեջ՝10 հատ
28	բարձի երես	հատ	բամբակյա բարձի երես, գործվածքը 100 % բամբակյա սպիտակ կտորից,պատրաստի արտադրանքի չափսերը՝(60x50)սմ:1քմ ոչ պակաս քան 140գրամ,արտադրանքի տեսքը համաձայն հաստատված նմուշի,փաթեթավորումը՝ պոլիեթիլենային թափանցիկ պարկերով,1 պարկի մեջ՝20 հատ
29	ծածկոց	հատ	**ГОСТ** -9382-78: Բաղադրությունը՝ բուրդ-50%, բամբակ -20%, վիսկոզ - 30%: Պատրաստի արտադրանքի չափսերը (210 Х 150) սմ, 1 մ^2 քաշը 700 գրամ ոչ պակաս, գույնը՝ շականակագույն, մուգ շականակագույն վանդակներով : Ծածկոցի մի ծայրում, 20 սմ հեռավորության վրա պետք է լինեն 5 սմ լայնության 3 հատ սև գծեր, գծերի միջև հեռավորությունը՝ 5 սմ: Վերին և ներքին եզրերը՝ զարդակարված: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Ծածկոցի անկյուններից մեկում պետք է կարված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 10հատ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը:

Հավելված 2
«_ _» _____ 2015թ. կնքված
N_____ շրջանակային համաձայնագրի

հ/հ	Ապրանքի անվանումը	Չ/մ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Քանակը	Գումարը /ՀՀ դրամ/	Գնման ժամանակացույց	Վճարման ժամանակացույց
1	կիսավերարկու	հատ		260		3եռամսյակ	3 եռամսյակ
2	թիկնոց-ուսնոց	հատ		100		3եռամսյակ	3եռամսյակ
3	վերնաշապիկ երկարաթև սպիտակ	հատ		100		2եռամսյակ	2եռամսյակ
4	վերնաշապիկ կարճաթև սպիտակ	հատ		100		3եռամսյակ	3եռամսյակ
5	վերնաշապիկ երկարաթև դեղնականաչավուն	հատ		250		2եռամսյակ	2եռամսյակ
6	վերնաշապիկ կարճաթև դեղնականաչավուն	հատ		250		3եռամսյակ	3եռամսյակ
7	փողկապ սև գույնի	հատ		150		3եռամսյակ	3եռամսյակ
8	փողկապ դեղնականաչավուն գույնի	հատ		250		3եռամսյակ	3եռամսյակ
9	գոտկատեղի-կաշեգոտի	հատ		150		2եռամսյակ	2եռամսյակ
10	գլխարկ ամենօրյա կիսաբրդյա	հատ		100		3եռամսյակ	3եռամսյակ
11	գլխարկ ականջակալերով ոչխարի մորթուց	հատ		130		3եռամսյակ	3եռամսյակ
12	համազգեստ 1 /կիտել ամենօրյա և ազատթող փողկերով տաբատ/	լրակազմ		140		2եռամսյակ	2եռամսյակ
13	համազգեստ 2 /բաճկոն և ազատթող փողկերով տաբատ/	լրակազմ		120		2եռամսյակ	2եռամսյակ
14	համազգեստ 3 /կոստյում ձմեռային արհեստական մորթե օձիքով/	լրակազմ		180		3եռամսյակ	3եռամսյակ
15	համազգեստ 4 /կոստյում ամառային գունաքողարկված կտորից/	լրակազմ		250		2եռամսյակ	2եռամսյակ

16	ուսադիր ամենօրյա ենթասպայական կազմի համար	զույգ		250		Յեռամսյակ	Յեռամսյակ
17	ուսադիր ամենօրյա հանովի և դնովի ենթասպայական կազմի համար	զույգ		400		2եռամսյակ	2եռամսյակ
18	ուսադիր տոնական ենթասպայական կազմի համար	զույգ		250		2եռամսյակ	2եռամսյակ
19	ուսադիր սպիտակ ենթասպայական կազմի համար	զույգ		200		Յեռամսյակ	Յեռամսյակ
20	ուսադիր տոնական սպայական կազմի համար	զույգ		100		Յեռամսյակ	Յեռամսյակ
21	ուսադիր տոնական բարձրաստիճան սպայական կազմի համար	զույգ		70		Յեռամսյակ	Յեռամսյակ
22	աստղ դեղին	հատ		3000		Յեռամսյակ	Յեռամսյակ
23	աստղ խակի	հատ		1000		Յեռամսյակ	Յեռամսյակ
24	գլխարկանշան փոքր	հատ		150		Յեռամսյակ	Յեռամսյակ
25	կակարդ դաշտային	հատ		300		Յեռամսյակ	Յեռամսյակ
26	բարձ	հատ		120		Յեռամսյակ	Յեռամսյակ
27	սավան	հատ		400		Յեռամսյակ	Յեռամսյակ
28	բարձի երես	հատ		250		Յեռամսյակ	Յեռամսյակ
29	ծածկոց	հատ		90		Յեռամսյակ	Յեռամսյակ
ընդամենը							

Հավելված 4
«____» _____ 2015թ. կնքված
գնման պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը_____	գտնվելու վայրը_____
ՀՀ_____	ՀՀ_____
_____	_____
ՀՎՀՀ_____	ՀՎՀՀ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» _____ 20____թ.

Պայմանագրի անվանումը՝ «_____»:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» _____ 20____թ

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն, ի դեմս _____ և Կատարողը, ի դեմս _____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ ծառայություններ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «____» _____ 20____թ.-ից «____» _____ 20____թ. ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ ծառայությունը

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ ծառայությունների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
_____	_____
(Ազգանուն, Անուն)	(Ազգանուն, Անուն)
ԿՏ	ԿՏ

Հավելված 5
***«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10»* ծածկագրով**
ընթացակարգի հրավերի
N ...ՀՀ ԳԱԿ-ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-11/10-010 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____-ի կողմից N _____ ծածկագրով
Պատվիրատուի անվանումը

հայտարարված ընթացակարգի _____ չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«_____» _____ 20___թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1

***ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10»* ծածկագրով**

ընթացակարգի հրավերի

N ...ՀՀ ԳԱԿ-ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-11/10-010 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ..... ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ...-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

համաձայն հետևյալ գների՝

Չափա-բաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	«Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1»			
2	«Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2»			
3	«Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2»			
...	...			
...	...			

****3-րդ սյուակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:***

****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

....

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«.....» ..... 20.....թ.
(ամսաթիվը, ամիսը)